**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**Հասարակական խորհրդում**

**Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության ներգրավման վերաբերյալ**

ՀՀ կողմից վավերացված կոնվենցիաներով, ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (ՀԸԳՀ) սահմանված են և կարևորվում են աշխատողների միավորման ազատության սկզբունքները և քաղաքականության մշակման ընթացքում սոցիալական երկխոսությունն աշխատանքային հարաբերություններում, ինչպես նաև պետության պարտավորությունը՝ աջակցել և զարգացնել դրանք:

Աշխատանքային հարաբերություններում սոցիալական երկխոսությունը սահմանված է նաև ԱՄԿ «Կազմակերպվելու և կոլեկտիվ բանակցություններ վարելու իրավունքի մասին» թիվ 98, «Կոլեկտիվ բանակցություններին աջակցելու մասին» թիվ 154 և «Պետական ծառայության բնագավառում աշխատանքային հարաբերությունների մասին» թիվ 151 կոնվենցիայով, Աշխատանքային օրենսգրքով, «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքով: Այն ենթադրում է արհմիությունների՝ որպես աշխատողների ներկայացուցիչ և գործատուի (տվյալ դեպքում՝ պետական գերատեսչության ղեկավարի) միջև խորհրդակցություններ, տեղեկատվության փոխանակում, քննարկումներ և կոլեկտիվ բանակցություններ:

Հաշվի առնելով վերոնշվածը՝ ինչպես նաև այն, որ ՆԳՆ համակարգում գործում է Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության (այսուհետ՝ Միություն) անդամ կազմակերպությունը, որի անդամ են ՆԳՆ աշխատակիցները, կարևոր է Միության՝ որպես աշխատողների ներկայացուցիչ մասնակցությունը ՆԳՆ նախարարին կից Խորհրդի աշխատանքներին:

Նախարարության կողմից ձեռնարկվող բարեփոխումների, ընդհանուր և ոլորտային քաղաքականության ուղղությունների մշակման, ինչպես նաև խնդիրների և նպատակների իրականացման ժամանակ պետք է հաշվի առնվեն նաև աշխատողների շահերը, իրավունքներն ու կարիքները: Այս համատեքստում ևս կարևոր է մեր Միության մասնակցությունը Խորհրդի կազմում, դա թույլ կտա

վերոնշված գործընթացներում հաշվի առնել Նախարարության և դրա ենթակա մարմինների աշխատողների հավաքական շահը:

Միությունը փորձ ունի իրավական ակտերի, ռազմավարությունների և հայեցակարգերի մշակման գործընթացներին մասնակցելու, փորձագիտական կարծիք հայտնելու: Լինելով Եվրոպայի հանրային ծառայությունների արհմիությունների ֆեդերացիայի (EPSU) անդամ՝ կարող ենք նաև ներկայացնել միջազգային փորձը ՆԳՆ կառույցների խնդիրների մասին, այդ թվում՝ աշխատողների կոլեկտիվ խնդիրների համատեքստում: Միությունը հնարավորություն և փորձ ունի նաև կազմակերպել ուսուցումներ աշխատանքային հարաբերությունների հետ առնչվող տարբեր թեմաներով (այդ թվում՝ թիմ-բիլդինգ), ինչի շնորհիվ կարող է աջակցել/համագործակցել Նախարարության հետ՝ աշխատակիցների կարողությունների զարգացման, մոտիվացման, աշխատանքային իրավունքների մասին իրազեկվածության բարձրացման ուսուցումներ կազմակերպելու նպատակով:

Արհմիության ներգրավվածությունը Խորհրդում կարևոր դեր ունի նաև հանրային ծառայության գրավչության բարձրացման, Նախարարության կառավարման պրոցեսում ներառականության և ժողովրդավարության սկզբունքի լիարժեք իրացման համար: Այն կարևոր ցուցիչ է նաև միջազգային կառույցների կողմից Հայաստանի ժողովրդավարության և աշխատանքային իրավունքների պաշտպանվածության մակարդակի գնահատման համար: